

յորովայնէ մարց մերոց մառչիլով եւ ցքւով քսակաց-  
որպէս Յօրն ասէր, Մերկ խակ ելաք յորովայնէ մօր  
մերոյ եւ մերկ խակ դառնալոց եմք յարգանդ մօր ի  
հող ուստի ստեղծեալ եմք ամենեքեան:

Արդ երանի՛ էր ինձ թէ կարողանայի օգնել քեզ  
ըստ առակի Սամարացւոյն զոր արար զայցելութիւն  
անկեղոյն ի ձեռս աւագակաց, զոր Տէրն մեր առ ինքն  
օրինակեաց, որ արար զքաղցրութիւն մարդասիրու-  
թեան անկեալ բնութեանս ի ձեռն հին թշնամոյն մե-  
րոյ, եւ նմանիլ կարէաք նոյն Տեառն որ պատուիրեաց  
թէ Որպէս ես ձեզ արարի՛ նոյնպէս եւ դուք միմեանց  
առնիջիք, եւ թէ՛ Չողորմութիւն կամիմ եւ ոչ զպա-  
տարագ, եւ թէ՛ եղերուք զթաճք որպէս եւ Հայրն  
ձեր երկնաւոր զթաճ է: Իսկ արդ եթէ ոչ կարէ ոք  
օգնել ումեք յամենայն իր, բայց ըստ տեղոյն եւ  
ըստ իրին եւ ըստ ժամանակին որ հնարաւոր ինչ լիցի  
մարդկան. եւ թէ լիցի ի մարդկանէ՛ այն անհարկինքն  
մնայ ամենայն հնարաւորից հնարաւորին Աստուծոյ  
գլուխեաւ հնարելի: Վասն որոյ ասէ մարդարէն՝ Օգնու-  
թիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ որ արար զերկինս եւ զեր-  
կիր, եւ թէ՛ Բարի է յուսալ ի Տէր քան յուսալ ի մար-  
դիկք: Յուսա՛ ի Տէր եւ արա զքաղցրութիւն զի բնա-  
կեսցես ընդ ձեռին նորա հովուութեան: Քանզի ի բնա-  
ւից նախնոյն մինչեւ ցարդ որ զգուռն իւր երաց ու-  
ղորմութեան՝ ոչ ոք կարացին յաշխարհակալաց փա-  
կել ընդդէմ ուրուք, եւ յորժամ բարկացի՛ ոչ կարէ  
յետս դարձուցանել, զի իւրն է կամք եւ անհասանելի  
են միտք ստեղծուածոց առ ի քննել զնա, զի Ո՞վ  
զիտաց զմիտս Տեառն եւ ո՞վ եղեւ նմա խորհրդակից,  
ասէ Իմաստունն, ըստ որում եւ առաքեալ վկայէ Ո՞-  
խորք մեծութեան եւ իմաստութեան, ո՞վ կարէ քննել  
զանքնին դատաստան նորա: Այլ զի ի դիպող ժամու  
ասացին մարդարէքն ի ժամանակի բարկութեան զու-